ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 01

«4» հունիս 2017թ.

ք. Վանաձոր

ՀՀ Լոռու մարզի,Վանաձոր քաղաքի Գրիբոյեդովի անվան թիվ 11 Ա/Դպրոց ՊՈԱԿ , ի դեմս տնօրեն Ն. Ա.Սահակյանի
կազմակերպության, կամ քաղաքացու անուն, ազգանուն

մի կողմից (այսուհետ «Պատվիրատու»), և «Արմեն և Արեն» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս տնօրեն Ա.Մելիքսեթյանի, մյուս կողմից, հետագայում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքին համապատասխան կատարել

« Վանաձորի Գրիբոյեդովի անվան Թիվ 11 ավագ դպրոց ,,ՊՈԱԿ-ի զուգարանների վերանորոգման և մեկ դասասենյակի լուսամուտների փոխման շին մոնտաժային
կառույցի անվանումը, հասցեն

աշխատանքների (այսուհետ՝ վերանորոգման աշխատանքներ) նկատմամբ որակի տեխնիկական հսկողության աշխատանքներ (այսուհետ՝ «Աշխատանքներ») ապահովելով վերանորոգման աշխատանքների իրականացման համապատասխանությունը որակի ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև կանխելով անորակ աշխատանքների իրականացումը, իսկ «Պատվիրատուն» պարտավորվում է վճարել սույն պայմանագրի բոլոր պահանջներին համապատասխան կատարված «Աշխատանքների» դիմաց:

2. Աշխատանքների հանձնման – ընդունման կարգը

2.1. Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է կատարված Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը: Պատվիրատուն երկու աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է Կատարողի կողմից կատարված Աշխատանքները և թերությունների բացակայության դեպքում ստորագրում է կատարված Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքների ընդհանուր գինը կազմում է՝

143 000 (մեկ հարյուր քառասուներեք հազար) դրամ

3.2 Պատվիրատուն Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողի բանկային հաշվին է փոխանցում, կամ Կատարողի դրամարկղ է վճարում Կատարողի կողմից հարկային հաշվում ներկայացված գումարը:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1. Կատարողն իրավունք ունի՝

4.1.1. Կառուցման աշխատանքներ կատարող կազմակերպությանը տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հրահանգներ թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ.

4.1.2. արգելել պետական ստանդարտներին, տեխնիկական պայմաններին և այլ նորմատիվային փաստաթղթերին չհամապատասխանող նյութերի օգտագործումը.

4.2. Կատարողը պարտավոր է՝

4.2.1. պարբերաբար ստուգել բոլոր կատարված Կառուցման աշխատանքների որակն ու դրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին.

4.2.2. ստուգել Կառուցման աշխատանքների ընթացքում օգտագործվող նյութերի որակը և որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը.

4.2.3. աշխատանքների ընդհանուր մատյանում նշել իր նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունների ու դրանց վերացման մասին.

4.2.4. հետևել վերանորոգման աշխատանքներ կատարող կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորությունների կատարմանը.

4.3. Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և դրա որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

4.4. Պատվիրատուն օժանդակում է Կատարողին Կառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության լիարժեք ապահովման համար:

4.5. Պատվիրատուն պարտավորվում է վճարել սույն պայմանագրի 3.2. կետով սահմանված սույն պայմանագրի բոլոր պահանջներին համապատասխան կատարված Աշխատանքների գինը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կառուցման աշխատանքների ավարտը:

5.2. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել, լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

5.3. Սույն պայմանագրի Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

5.4. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5. Սույն պայմանգիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է սույն պայմանագրի մեկ օրինակ:

6. Կողմերի վավերապայմանները

«Պատվիրատու»	«Կատարող»
,,Գրիբոյեդովի անվան թիվ11 Ա/դպրոց	,, Արմեն և Արեն,, ՍՊԸ
Ք. Վանաձոր,Ազատամարտիկներ պ 1	Ք. Վանաձոր,Թումանյան3
ՀՎՀՀ 06909818	ՀՎՀՀ 06937501
ՎՏԲ Հայաստան Բանկ	ԻնեկոԲանկ ,,Վանաձոր ,, Մ/Ճ
h/h 16036100275300	h/h 20502 2201532 1002
Տնօրեն	Տնօրեն
Ն.Ա.Սահակյան	Ա. Մելիքսեթյան